ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
YEREVAN STATE UNIVERSITY
ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ

Հրաման

214/1-Լ 06 նոյեմբեր, 2024

Ընդունող մարմին **Ռեկտոր**

Կարգավիճակ **Գործում է**

ՈՒՍԱՆՈՂԻ ՏԵՂԱՓՈԽՈՒԹՅԱՆ ԵՎ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ ՎԱՐԵԼՈՒ ԿԱՐԳ ՈՒ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թ. օգոստոսի 25-ի թիվ 1240-Ն որոշմամբ հաստատված «Բարձրագույն ուսումնական հաստատություններում սովորողների ակադեմիական շարժունության» կարգի, ՀՀ կրթության և գիտության նախարարի 2011 թ. նոյեմբերի 17-ի թիվ 1242-Ն (խմբ. 2018 թ. դեկտեմբերի 17-ի թիվ 1676-Ն և 2023 թ. դեկտեմբերի 14-ի թիվ 148-Ն հրամաններով) հրամանով հաստատված «Հայաստանի Հանրապետության բարձրագույն ուսումնական հաստատությունների ուսա (ազատման) և վերականգնման» կարգի պահանջները և ղեկավարվելով «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի (այսուհետ՝ ԵՊՀ) կանոնադրության 57-րդ կետի 10-րդ ենթակետով՝

հրամայում եմ՝

1. Սահմանել, որ ուսանողի (առկա, հեռակա) տեղափոխությունը՝

1) բակալավրի կրթական ծրագրով չի թույլատրվում առաջին և ավարտական կուրսերում,

2) մագիստրոսի կրթական ծրագրով չի թույլատրվում ավարտական կուրսում, այդ թվում՝ 1 տարի տևողությամբ կրթական ծրագրի դեպքում,

3) մագիստրոսի կրթական ծրագրով թույլատրվում է առաջին կիսամյակի ավարտից հետո:

2.
Ուսանողական իրավունքների վերականգնումը թույլատրվում է սկսած առաջին կուրսի ե
:

3. Ուսանողի տեղափոխության և ուսանողական իրավունքները վերականգնելու մասին դիմումները ներկայացվում են՝

1) առկա ուսուցման դեպքում՝ տվյալ կիսամյակի ուսումնական պարապմունքներին նախորդող և հաջորդող 2 շաբաթների ընթացքում,

2) հեռակա ուսուցման դեպքում՝ տվյալ կիսամյակի ուսումնական պարապմունքներին նախորդող 3 շաբաթների ընթացքում,

3) պարտադիր ժամկետային զինվորական ծառայությունից զորացրված ուսանող ի համար՝ ձմեռային զորակոչի դեպքում՝ զորացրվելու օրվանից հետո ոչ ուշ, քան երկու ամսվա ընթացքում, ամառային զորակոչի դեպքում՝ զորացրվելու օրվանից հետո ոչ ուշ, քան երեք ամսվա ընթացքում:

4. Ուսանողի տեղափոխության կամ ուսանողական իրավունքները վերականգնելու դիմումի վերաբերյալ դրական որոշում կայացնելիս, առարկայական տ արբերություններ և/կամ նախկին կիսամյակների ակադեմիական պարտքեր (առավելագույնը 20 կրեդիտ) ունեցող ուսանողի կողմից սահմանված վճարումները (5 աշխատանքային օրվա ընթացքում) կատարելուց հետո տրվում է կցագրման հրաման:

Առարկայական տարբերություններ և/
կամ նախկին կիսամյակների ակադեմիական պարտքեր չունենալու դեպքում, սահմանված ուսման վարձը վճարելուց հետո տրվում է ուսանողի տեղափոխության կամ ուսանողական իրավունքները վերականգնելու մասին հրաման:

5. Կցագրման հրամանը ստանալուց հետո տվյալ ուսումնական ստորաբաժանման գրասենյակը, էլեկտրոնային կառավարման համակարգում (SuperVision) լրացնում է առարկայական տարբերություններն ընդունող հանձնաժողովի կազմը և ժամանակացույցը:

6. Տեղափոխվող կամ ուսանողական իրավունքները վերականգնող (այդ թվում պարտադիր ժամկետային
զինվորական ծառայությունից զորացրված) ուսանողները
առարկայական տարբերությունները պետք է հանձնեն

1) 1-ին կիսամյակում՝

ա. առկա ուսուցման դեպքում՝ նոյեմբերի 1-15-ը (վերահանձնման հնարավորությունը՝ դեկտեմբերի 1-10-ը),

բ. հեռակա ուսուցման դեպքում՝ դեկտեմբերի 1-15-ը (վերահանձնման հնարավորությունը՝ հունվարի 8-18-ը):

2) 2-րդ կիսամյակում՝ առկա և հեռակա ուսուցման դեպքում՝ ապրիլի 1-15-ը (վերահանձնման հնարավորությունը՝ մայիսի 1-15-ը):

3) Ավարտական կուրսի 2-րդ կիսամյակում՝ առկա և հեռակա ուսուցման դեպքում մարտի 20-30-ը (վերահանձնման հնարավորությունը՝ ապրիլի 5-15-ը):

7. Ուսանողական իրավունքները վերականգնող ուսանողի նախկին կիսամյակների ակադեմիական պարտքերի մարումն իրականացվում է ուսումնական պլանով նախատեսված քննաշրջանի ժամանակահատվ վերահանձնման երկու փուլերը:

Ավարտական կուրսի 2-րդ կիսամյակում՝ մարտի 5-10-ը (առաջին վերահանձնումը՝ մարտի 15-20-ը, երկրորդ վերահանձնումը՝ մարտի 30-ից ապրիլի 5-ը):

8. Առարկայական տարբերությունները և/
կամ նախկին կիսամյակների ակադեմիական պարտքերը հանձնելուց (չհանձնելուց) հետո տվյալ ուսումնական ստորաբաժանման գրասենյակը 3 աշխատանքային օրվա ընթացքում ԵՊՀ ուսումնամեթոդական վարչության կազմակերպչական կամ մագիստրատուրայի բաժիններ է ներկայացնում հանձնման արդյունքների վերաբերյալ տեղեկատվություն (զեկուցագիր):

9. Առարկայական տարբերությունները և/կամ նախկին կիսամյակների ակադեմիական պարտքերը նախատեսված ժամկետում հանձնած ուսանողը պարտավոր է 5 աշխատանքային օրվա ընթացքում վճարել տվյալ կիսամյակի համար նախատեսված ուսման վարձը՝ հրամանագրման համար:

10. Առարկայական տարբերությունները և/
կամ նախկին կիսամյակների ակադեմիական պարտքերը սահմանված ժամկետում չհանձնած ուսանողի կցագրման հրամանը համարվում է անվավեր:

11. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

12. Ուժը կորցրած ճանաչել ԵՊՀ ռեկտորի ժամանակավոր պաշտոնակատարի 2020 թ. փետրվարի 5-ի թիվ 20/78, ԵՊՀ ռեկտորի պարտականությունների ժամանակավոր կատարողի 2022 թ. փետրվարի 1-ի թիվ 20/156-Լ և ԵՊՀ ռեկտորի 2022 թ. ապրիլի 21-ի թիվ 76/7-Ա հրամանները:

13. Սույն հրամանի մասին տեղեկացնել ԵՊՀ ուսանողներին և աշխատողներին:

Սույն փաստաթուղթը բեռնվել է ԵՊՀ փաստաթղթերի պաշտոնական հրապարակման կայքից
https://www.ysu.am/documents-categories

Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, 0025, Ալեք Մանուկյան 1
(+37460) 710000
info@ysu.am